

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2019 ԹՎԱԿԱՆ



## ՓԱՍՏԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Շնդհանուր ԱԿՏԻՎՆԵՐԸ կազմել են 222,446 մլն ՀՀ դրամ
- Շնդհանուր ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ կազմել են 185,042 մլն ՀՀ դրամ
- ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԸ աճել են 13.3%-ով և կազմել են 135,921 մլն ՀՀ դրամ
- Բանկի կողմից ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՆ աճել են 5.7%-ով և կազմել են 14,006 մլն ՀՀ դրամ
- ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ աճել են 15.3%-ով և կազմել են 38,475 մլն ՀՀ դրամ
- 2019 թվականի վերջին Բանկն ունեցել է թվով 60 ՄԱՍՆԱԾՅՈՒՂ:



## ԴԵՊՈՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

### ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ,

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս ամենամյա տարեկան ժողովի ընթացքում Ձեզ ենք ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքները, ամփոփում ենք ստացված արդյունքներն ու ձեռքբերումները:

2019 թվականը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի համար բուռն աշխատանքային ու նոր ծրագրերի գեներացման տարի էր: Բանկի ընտրված ռազմավարությունն ու տարբեր ստորաբաժանումների կողմից կյանքի կոչված միջոցառումները, չնայած տնտեսական, քաղաքական տատանումներին, ֆինանսական համակարգի սուր մրցակցության պայմաններին, տվեցին իրենց արդյունքներն ու Բանկը պահպանեց շուկայում իր կայուն դիրքերն ու մասնաբաժինը: Հաշվետու տարում Բանկում իրականացված կառուցվածքային փոփոխությունները մեզ հնարավորություն տվեցին առավել արդյունավետ դարձնել ստորաբաժանումների աշխատանքը, բանկ-հաճախորդ հարաբերություններն ու գործարար գործընթացները, իսկ բանկային ծառայությունների երեք ուղղություններով զարգացման աշխատանքները բերեցին տարբեր սեգմենտներում հաջողությունների գրանցման՝ հասնելով թիրախային նպատակներին: 2019 թվականի ընթացքում Բանկի ռիսկերի կառավարման մակարդակը մշտապես գտնվել է Բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում: Հատկանշական է, որ ամենին զուգահեռ՝ Բանկը հաջողություններ է գրանցել նաև հաճախորդներին տրամադրված վարկերի պորտֆելում՝ գրանցելով պորտֆելի 13.3% աճ և պահպանելով պորտֆելի բարձր որակը:



Թվային տեխնոլոգիաների զարգացման միտումները ստիպում են մշտապես վերանայել մատուցվող ծառայությունների շրջանակն ու որակը՝ նոր հեռանկարներ բացելով Բանկի գործառության մակարդակի զարգացման և արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Թվային բանկային ծառայությունների մատուցման ոլորտում մենք գրանցեցինք զգալի ձեռքբերումներ՝ հաճախորդներին ներկայացնելով ամբողջովին նոր ու վերափոխված ԱՐԱՐԱՏՄՈՐԱՅԼ բջջային հավելվածը՝ հնարավորություն տալով իրականացնել բանկային գործարքները հեռահար՝ առավել արագ և անվտանգ հարթակում:

Մեր հաճախորդների համար լինելով կայուն և հավատարիմ գործընկեր՝ մենք կարողացանք հաշվետու տարում պահպանել ու ընդլայնել հաճախորդների հետ համագործակցության շրջանակը՝ բարձացնելով նրանց գոհունակության մակարդակը:

Հարկ է հավելել, որ 2019 թվականի տարեկան ձեռքբերումներն ու հաջողությունները, ոչ միայն Բանկի մենեջմենթի, այլ նաև մեր թիմի յուրաքանչյուր անդամի ամենօրյա աշխատանքի ու հետևողականության արդյունքն է: Ուստի առաջիկայում իրականացվելիք ծրագրերն ու գրանցած հաջողությունները ևս կշարունակեն լինել նրանցից յուրաքանչյուրինը:

Երախտագիտությամբ ամփոփելով, ուզում եմ նշել, որ լավագույն ջանքերի կիրառմամբ, մենք կիրականացնենք առավելագույնը մեր բաժնետերերի, հաճախորդների ու գործընկերների շրջանակների ընդլայնման ու վստահության մակարդակի առավել բարձրացման համար:





## ԴԵՊԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

### ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ,  
2019 թվականը հիշարժան էր մի շարք ծրագրերի իրագործմամբ, հաճախորդներին նոր պրոդուկտների մատուցմամբ, փոփոխություններով ու իրադարձություններով: Չնայած շարունակ աճող մրցակցային պայմաններին, առկա տնտեսական խնդիրներին՝ մենք պատվով հաղթահարեցինք ծառացած մարտահրավերները: Պայմանավորված երկարաժամկետ ծրագրերով՝ տարվա ընթացքում իրականացված կառուցվածքային փոփոխությունները միտված էին ռազմավարական երեք ուղղությունների համաչափ զարգացմանը:

Նորարարությունների հանդեպ մեր պատրաստակամ վերաբերմունքը արտահայտվեց նաև 2019 թվականի գործունեությամբ: Մենք առանձնացանք մատուցվող թվային բանկային ծառայությունների զարգացման և արդիականացման նոր միջոցառումներով՝ ուշադրության կենտրոնում պահելով մասնավորապես մոբայլ բանկինգի կատարելագործումը: Առցանց և թվային ֆինանսական ծառայությունների մատուցման շարունակաբար զարգացող շուկան, լինելով բավական մրցակցային, ստիպում է շուկայի մասնակիցներին պահպանել ու ընդլայնել իրենց դիրքերը: Իրականացված լայնածավալ աշխատանքները հնարավորություն տվեցին հաճախորդներին օգտվել առաջարկվող ծառայություններից առավել արագ, մատչելի և արդյունավետ եղանակներով:



Հաճախորդներին հասանելի դարձնելով առավել թարմացված և ընդլայնված ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱԼ բջջային հավելվածը՝ մենք հնարավորություն ստացանք հաճախորդների պահանջմունքների բավարարմանը զուգահեռ՝ նորագույն վաճառքի խողովակների կիրառմամբ, ապահովել եկամտի այլ աղբյուրներ:

Մշտապես ուսումնասիրելով ներդրումային բանկային ծառայությունների ոլորտը և այս ոլորտ մրցակիցների ներթափանցման միտումները՝ մենք, շուկայում մեր մասնաբաժինը պահելու և առաջխաղացում գրանցելու համար, 2019 թվականի ընթացքում իրականացրեցինք համալիր միջոցառումներ գործող ներդրումային ծառայությունների զարգացման ու խթանման ուղղությամբ: Ոլորտում առանձնանալով տարիների փորձով՝ մենք հաշվետու տարում ևս պահպանեցինք մեր առաջատար դիրքերը: Այսպիսով՝ 2019 թվականին հաճախորդների համար իրականացրեցինք կորպորատիվ պարտատոմսերի թվով 4 երաշխավորված տեղաբաշխումներ, նրանց մատուցեցինք բրոքերային ծառայություններ վերանայելով արժեթղթերով գործառնությունների իրականացման մեխանիզմները՝ հնարավորություն ընձեռեցինք հաճախորդներին առցանց մուտք գործել միջազգային շուկաներ:

Բանկի նախորդ տարիների միջնաժամկետ ռազմավարական ծրագրով մենք սահմանել էինք, որ առաջիկա տարիներին վարկավորման ծավալներն ընդլայնվելու են մասնավորապես մանրածախ, սպառողական վարկային պորտֆելի ավելացման հաշվին, ինչը իր հերթին բարձրացնելու է բանկի եկամտաբերության մակարդակը: Չնայած 2019 թվականի գործունեության ընթացքում իրականացված մի շարք միջոցառումներով մենք կյանքի կոչեցինք մեր նախանշած նպատակները, միևնույն ժամանակ, ընդհանուր վարկային պորտֆելում փոխեցինք մանրածախ և կորպորատիվ վարկերի տեսակարար կշիռները՝ ի հաշիվ մանրածախ պորտֆելի տեսակարար կշռի աճի:



Բանկի ընդհանուր գործունեության արդյունավետությունն դիտարկելով, որպես ռազմավարական առաջնահերթություն՝ մենք հաշվետու տարում իրականացրել ենք գործընթացների համալիր ուսումնասիրություններ: Մասնավորապես, ունենալով մասնաճյուղային լայն ցանց՝ գլխամաս-մասնաճյուղեր ճկուն և արդյունավետ կապի ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունքում ավելացրել ենք մասնաճյուղերի կողմից տրամադրվող վարկային պորտֆելի և իրականացվող այլ գործարքների ծավալները:

Բանկի գործունեության հաջողությունը մեծապես կախված է մեր աշխատակիցների թիմից: Վերջիններիս պատասխանատվության, հետևողականության և ամենօրյա աշխատանքի շնորհիվ մենք կարողացանք կյանքի կոչել մի շարք ռազմավարական նպատակներ:

Մրցակցային պայմաններում ֆինանսական ցուցանիշների կայունության և աճի դինամիկայի ապահովումը ևս մեկ անգամ վկայում է մեր աշխատակիցների պատասխանատվության ու ամենօրյա հետևողականության, ինչպես նաև մեր հավատարիմ հաճախորդների շրջանակի և նրանց թվին նորերի ավելացման մասին:

Շնորհակալական խոսքերս հղում եմ մեր բաժնետերերին, աշխատակիցներին և գործընկերներին՝ վստահ լինելով, որ համատեղ փոխվստահությունն ու համագործակցությունը հնարավորություն կտա մեզ բոլորիս ապագայում կյանքի կոչել այն նպատակները, որոնք միգուցե անավարտ են մնացել 2019 թվականին:



## 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 02.2019թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **իրականացրեց** ՖԻՆՔԱ ՈՒՎԿ-ի դոլարային պարտատոմսերի երաշխավորված տեղաբաշխումը:
- 03.2019թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի և «ԵՊՀ շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպության միջև **ստորագրվեց համագործակցության հուշագիր:**
- 04.2019թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի և "Finance in Motion" ընկերության Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամի միջև **կնքվեց 15 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր:**
- 04.2019թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի և «Գլաձոր» համալսարանի միջև **ստորագրվեց համագործակցության հուշագիր:**



 **04.2019Թ.** ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն հաջողությամբ **իրականացրեց ՖԻՆՔԱ ՈՒՎԿ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխումը:**

 **07.2019Թ.** ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն հաջողությամբ **իրականացրեց 20-րդ թողարկման դոլարային պարտատոմսերի տեղաբաշխումը:**

 **10.2019Թ.** ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի և EFSE կազմակերպության միջև **կնքվեց 10 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր:**

 **12.2019Թ.** ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **իրականացրեց 21-րդ թողարկման դոլարային պարտատոմսերի տեղաբաշխումը:**



## 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԱՑՎԱԾ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

- 02.2019թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն միջազգային հեղինակավոր "Global Finance" ամսագրի կողմից ճանաչվել է **«ԱՌԵՎՏՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ»** բանկը Հայաստանում:
- 03.2019թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից 6-րդ անգամ ճանաչվել է **«ԲՈՐՍԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՆԴԱՄ»**՝ արժանանալով «AMX Grand Prix 2019» մրցանակին:
- 07.2019թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ավստրիական Raiffeisen Bank International AG-ի կողմից 6-րդ անգամ արժանացել է **«ՈՐԱԿԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ 2018/2019»**՝ «STP Quality Award» մրցանակին:
- 10.2019թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն Միջազգային RIA Money համակարգի կողմից արժանացել է **«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՆԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»** մրցանակին:
- 12.2019թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն "Visa Recognition Award" մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է **«ՎISA ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ»**-ի մրցանակի:



## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ


2019 թվականին իր ճիշտ մշակված ռազմավարության և իրականացրած գործունեության արդյունքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն գրանցեց դրական աճ և շարունակեց կայուն դիրքերում պահպանել իր ֆինանսական ցուցանիշները:



### Ակտիվներ


2019թ.-ին գրանցած արդյունքներով՝ Բանկի ակտիվները հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կազմել են 222,446 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.7%-ով:

#### Ընդհանուր ակտիվներ, մլն. ՀՀ դրամ




2019թ.-ի և 2018թ.-ի վերջի դրությամբ ընդհանուր ակտիվների կազմն ու կառուցվածքը ներկայացված են ստորև.

### Ակտիվների կազմը և կառուցվածքը, 31.12.2019



## Ակտիվների կազմը և կառուցվածքը, 31.12.2018



2019թ. տարեկան արդյունքներով Բանկի ընդհանուր ակտիվների կազմում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 83.2%, նախորդ տարվա համեմատ աճելով 6.1 տոկոսային կետով:


| մլն ՀՀ դրամ                                        | 2019    | 2018    | Փոփոխություն | %      |
|----------------------------------------------------|---------|---------|--------------|--------|
| Ակտիվներ, այդ թվում՝                               | 222,446 | 220,828 | 1,618        | 0.7%   |
| Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝                     | 185,144 | 170,277 | 14,867       | 8.7%   |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ      | 135,921 | 119,978 | 15,943       | 13.3%  |
| Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 10,748  | 16,938  | -6,190       | -36.5% |
| Ներդրումային արժեթղթեր                             | 38,475  | 33,361  | 5,114        | 15.3%  |
| Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը                | 83.2%   | 77.1%   | -            |        |





## Վարկեր

Բանկի հաճախորդներին տրամադրված վարկերը 2019թ.-ի տարեվերջին կազմել են 135,921 մլն ՀՀ դրամ, ինչը կազմում է Բանկի ընդհանուր ակտիվների 61.1%-ը: Հատկանշական է, որ 2018թ.-ի համեմատ ընդհանուր վարկային պորտֆելը աճել է շուրջ 13.3%-ով կամ 15.9 մլրդ ՀՀ դրամով, որտեղ կարևորագույն դեր է ունեցել ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի պորտֆելի զգալի աճը:



2019թ.-ի գործունեության ընթացքում վարկային պորտֆելի ընդլայնման ուղղությամբ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Հաճախորդների պահանջների մշտադիտարկումների արդյունքում մշակվել են նոր, մրցունակ պրոդուկտներ, վերանայվել են վարկերի տրամադրման պայմանները, իրականացվել են էլեկտրոնային «Սքորինգ» համակարգի միջոցով վարկերի տրամադրման պրոդուկտների վերագործարկումը և համակարգի բարելավմանն ուղղված աշխատանքներ:


2019թ.-ին շարունակելով սպառողական և հիփոթեքային վարկավորման աճի ուղղությամբ տարվող քաղաքականությունը՝ տրամադրված սպառողական վարկերը 2018թ. համեմատ աճել են մոտ 10.1 մլրդ ՀՀ դրամով (45.4%-ով), ինչի արդյունքում 2019թ. դեկտեմբերի դրությամբ կազմել են մոտ 32.4 մլրդ ՀՀ դրամ, իսկ հիփոթեքային վարկերի ծավալը աճել է 13.2%-ով: Արդյունքում՝ ընդհանուր վարկային ներդրումների մեջ սպառողական վարկերի տեսակարար կշիռը կազմել է 23.8% (2018թ.-ին կազմել է ընդհանուր վարկերի 18.6%-ը), իսկ հիփոթեքային վարկերինը՝ 14.4%:

2019թ.-ին ուշադրության կենտրոնում էր նաև կորպորատիվ վարկավորումը՝ մասնավորապես տնտեսության բազմազանեցված ճյուղերի ֆինանսավորումն ու տարբեր ծրագրերի շրջանակներում վարկերի տրամադրումը: Հաշվետու տարում Ընդհանուր վարկերի տեսակարար կշիռն մեծացել են առևտրի ոլորտի ֆինանսավորման վարկերը՝ կազմելով՝ 21.3% (2018թ.-ին ցուցանիշը ընդհանուր վարկերում կազմել է 19.5%):






Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ տնտեսության ոլորտների, 31.12.2019




Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ տնտեսության ոլորտների, 31.12.2018







## Ներդրումային արժեքեր

Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով ազատ միջոցների տեղաբաշխումն եկամտաբեր ակտիվներում, միևնույն ժամանակ բարձր պահելով տեղաբաշխման բազմազանեցման մակարդակը՝ Բանկը 2019թ.-ը ամփոփեց ներդրումային արժեքների 38,475 մլն ՀՀ դրամ պորտֆելի ցուցանիշով:



Այսպիսով՝ Ներդրումային պորտֆելում ՀՀ պետական պարտատոմսերը կազմել են 23,499 մլն. ՀՀ դրամ՝ 2018թ.-ի համեմատ նվազելով՝ 10.6%-ով, Ոչ պետական պարտատոմսերը կազմել են 14,889 մլն. ՀՀ դրամ՝ աճելով 111.0%-ով: Հատկանշական է, որ 2019թ.-ին Ոչ պետական արժեթղթերի տեսակարար կշիռը ներդրումային պորտֆելում կազմել է 38.7%՝ 2018թ.-ի 21.2%-ի դիմաց:


### Ստորև ներկայացվում են Բանկի արժեթղթերի պորտֆելի կազմն ու կառուցվածքը.






## Պարտավորություններ

2019թ.-ի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 185,042 մլն ՀՀ դրամ:




Ստորև բերված է Բանկի պարտավորությունների կառուցվածքը.

### Պարտավորությունների կազմը և կառուցվածքը, 31.12.2019



## Պարտավորությունների կազմը և կառուցվածքը, 31.12.2018





2019թ.-ի ավարտին Միջազգային և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների ցուցանիշը կազմել է 69,348 մլն ՀՀ դրամ, ինչը պակաս էր նախորդ տարվա ցուցանիշից 7.6%-ով՝ միևնույն ժամանակ ընդհանուր պարտավորություններում վերջիններիս տեսակարար կշիռը նվազել է 2.9 տոկոսային կետով: Վերոնշյալը համահունչ է Բանկի կողմից որդեգրված միջոցների կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարությունը:

2019թ.-ի ընթացքում Բանկը շարունակել է ակտիվ համագործակցությունը Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերության (FMO), DEUTSCHE INVESTITIONS-UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպության (DEG), Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Համաշխարհային Բանկի (WB), Առևտրի և Զարգացման Սևծովյան Բանկի, Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական Հիմնադրամի (EFSE), Գերմանահայկական Հիմնադրամի (KfW), "Green for Growth Fund" Հիմնադրամի, "Incofin Investment Management" ընկերության, "ResponsAbility Global Microfinance Fund" ընկերության, "Blue Orchard" ընկերության, "The OPEC Fund for International Development" (OFID) ընկերության, Եվրասիական Զարգացման Բանկի (EDB), SYMBIOTICS SICAV ընկերության և այլոց հետ:

Բանկի ժամկետային ավանդները 2019թ.-ի ավարտին կազմել են 39,557 մլն ՀՀ դրամ՝ աճելով 2.2%-ով: Ժամկետային ավանդներում 34,651 մլն ՀՀ դրամը կազմել են ֆիզիկական անձանց (2018թ.-ին ցուցանիշը կազմել է 31,970 մլն ՀՀ դրամ), իսկ 4,906 մլն ՀՀ դրամը իրավաբանական անձանց միջոցները (2018թ.-ին ցուցանիշը կազմել է 6,726 մլն ՀՀ դրամ):





Բանկի ընթացիկ հաշիվների և ցպահանջ միջոցների ընդհանուր ցուցանիշը 2019թ.-ին կազմել է 43,862 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4.0%-ով: Ներգրավվող միջոցների դիվերսիֆիկացիայի և արդյունավետության համատեքստում՝ Բանկի կողմից թողարկված արժեթղթերը 2019թ.-ին նախորդ տարվա համեմատ աճել են 5.7%-ով՝ կազմելով 14,006 մլն ՀՀ դրամ:









## Սեփական կապիտալ

2019թ.-ի ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի գործունեության արդյունքում սեփական կապիտալի ցուցանիշը կազմել է 37,404 մլն ՀՀ դրամ՝ գերազանցելով 2018թ.-ի ցուցանիշը 7.1%-ով: Հաշվետու տարում բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում չի իրականացվել, ուստի սեփական կապիտալի ցուցանիշի աճը տարեկան գործունեությունից գեներացված 2,264 մլն ՀՀ դրամ Զուտ շահույթի արդյունք է:



2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմել է 8,803,655 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի Կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,760,731 հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով: 2019թ.-ի սեփական կապիտալի աճի արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 21,244 ՀՀ դրամ՝ 2018թ.-ի 19,828 ՀՀ դրամ ցուցանիշի համեմատ աճելով 7.1%-ով:






## Եկամուտներ և ծախսեր


ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ 2019թ.-ի գործունեության ընթացքում գեներացվել են 16,098 մլն ՀՀ դրամի Տոկոսային եկամուտներ՝ գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Տոկոսային եկամուտներում 77.8% գերակշիռ մաս կազմող հաճախորդներին տրամադրված վարկերից ստացվող տոկոսային եկամուտները տարեկան կազմել են 12,520 մլն ՀՀ դրամ՝ գերազանցելով 2018թ.-ի ցուցանիշը 2.4%-ով: Միևնույն ժամանակ, միջոցների տեղաբաշխման աղբյուրների բազմազանեցվածության ապահովման նպատակով՝ Բանկի արժեթղթերի պորտֆելում ազատ միջոցների ներդրումների արդյունքում Բանկը գեներացրել է 2,597 մլն ՀՀ դրամի տոկոսային եկամուտներ, որը 6%-ով ավել է նախորդ տարվա ցուցանիշից: 2018թ.-ի համեմատ 8.2%-ով ավելացել են նաև Բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից տոկոսային եկամուտները՝ կազմելով 292.5 մլն ՀՀ դրամ:

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ, 31.12.2019



Տարեկան կտրվածքով Բանկի տոկոսային ծախսերը 2019թ.-ին կազմել են 9,166 մլն ՀՀ դրամ: Տոկոսային ծախսերում 59.4% տեսակարար կշիռ ունեցող Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարվող տոկոսային ծախսերը (ներառյալ միջազգային կազմակերպություններից ներգրավված միջոցները) նախորդ տարվա համեմատ աճել են 7.7%-ով և կազմել 5,441 մլն ՀՀ դրամ: Բանկի հաճախորդներից ցպահանջ և ժամկետային ավանդների դիմաց կատարված ծախսերը 2019թ.-ին կազմել են 2,551 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա տարեկան ցուցանիշից խնայումը կազմում է 11.7%: Բանկի կողմից թողարկված արժեթղթերի տիմաց կատարված տոկոսային ծախսերը կազմել են 812.9 մլն ՀՀ դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա ընթացքում իրականացված տոկոսային ծախսերը 4.0%-ով:

**Տոկոսային և նմանատիպ ծախսեր, 31.12.2019**



Բանկի 2019թ.-ի գործունեության արդյունքում Ձուտ տոկոսային եկամուտները կազմել են 6,932 մլն ՀՀ դրամ: Ուշադրության կենտրոնում պահելով վաճառքի տարաբնույթ խողովակների միջոցով մատուցվող ծառայությունները՝ Բանկը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում նաև Ոչ տոկոսային եկամուտները: Այսպիսով՝ 2019թ.-ի գործունեության արդյունքում Կոմիսիոն վճարների տեսքով եկամուտները կազմել են 1,998 մլն ՀՀ դրամ՝ գերակատարելով 2018թ.-ի տարեկան ցուցանիշը 27.7%-ով: Վերջինս մեծապես պայմանավորված է վճարահաշվարկային ծառայություններից և պլաստիկ քարտերի սպասարկումից ստացված կոմիսիոն եկամուտների գերակատարմամբ: Միևնույն ժամանակ՝ 2019թ.-ին կոմիսիոն վճարների տեսքով ծախսերը նվազել են 2.2%-ով՝ կազմելով 800.3 մլն ՀՀ դրամ: Այսպիսով՝ 2019թ.-ի գործունեության արդյունքում 2018թ.-ի համեմատ կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ եկամուտներն աճել են 60.4%-ով և կազմել 1,198 մլն ՀՀ դրամ: 2019թ.-ի ընթացքում Բանկը արտարժույթային գործառնություններից գեներացրել է 1,061 մլն ՀՀ դրամի զուտ եկամուտ: Բանկի ընդհանուր վարչական ծախսերը կազմել են 6,513 մլն ՀՀ դրամ՝ 2018թ.-ի 8,482 մլն ՀՀ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշի 23.2% տարբերությունը պայմանավորված է ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԱԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ձեռքբերման արդյունքում ձևավորված գուդվիլի ամորտիզացիայով, որը հաշվետու տարում կազմել է 350 մլն ՀՀ դրամ՝ 2018թ.-ի 2,511 մլն ՀՀ դրամի դիմաց:


Միևնույն ժամանակ 2019թ.-ին Բանկի կողմից իրականացված կառուցվածքային փոփոխությունների և նոր աշխատակիցների համալրման արդյունքում 5.8%-ով աճել են Ընդհանուր աշխատավարձի գծով ծախսերը՝ կազմելով 3,676 մլն ՀՀ դրամ:






## Շահութաբերության գործակիցներ

2019թ.-ին ստորաբաժանումների ամենօրյա հետևողական աշխատանքի արդյունքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ գեներացրել է 2,264 մլն ՀՀ դրամի Զուտ շահույթ՝ գերազանցելով 2018թ.-ի ցուցանիշը 1,749 մլն ՀՀ դրամով:



2019թ.-ի վերջին ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ակտիվների և կապիտալի շահութաբերության գործակիցները (ROA և ROE) համապատասխանաբար կազմել են 1.0% և 6.3%: Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 1,285.6 ՀՀ դրամ, իսկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքի և մեկ բաժնետոմսին ընկնող շահույթի ցուցանիշի հարաբերակցությունը կազմել է 16.5:





## ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշտապես ուսումնասիրելով ներդրումային բանկային ծառայությունների ոլորտ նոր մրցակիցների ներթափանցման միտումները, շուկայում առաջարկվող պրոդուկտները, ինչպես նաև հաճախորդների կողմից ներդրումային ծառայությունների նկատմամբ աճող պահանջարկը՝ Բանկը շուկայում իր մասնաբաժինը պահելու և առաջխաղացում գրանցելու համար 2019թ.-ին ձեռնարկել է համապատասխան միջոցառումներ գործող ծառայությունների զարգացման ու խթանման ուղղությամբ՝ հնարավորություն ստանալով բազմազանեցնել նաև ոչ տոկոսային եկամտների ապահովման խողովակները: 2019 թվականի ընթացքում Բանկն իրականացրեց համալիր միջոցառումներ գործող ծառայությունների զարգացման ու խթանման ուղղությամբ:

- Բանկի կողմից 2019թ.-ի ընթացքում իրականացվել է «Ազգային Հիփոթեքային Ընկերության» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ մեկ և «Ֆինքա» ՈՒՎԿ-ի հետ պարտատոմսերի թվով չորս տեղաբաշխման գործընթացների կազմակերպում: Մասնավորապես, «Ազգային Հիփոթեքային Ընկերության» ՎՎԿ ՓԲԸ-ի համար տեղաբաշխվել են 3,5 մլրդ. ՀՀ դրամ ծավալով պարտատոմսեր, իսկ «Ֆինքա» ՈՒՎԿ-ի համար 2,5 մլրդ. ՀՀ դրամ ընդհանուր ծավալով դրամային և 2 մլն ԱՄՆ դոլար ծավալով դոլարային պարտատոմսեր: Բանկի կողմից իրականացվում է նաև վերոնշյալ պարտատոմսերի շուկա ստեղծողի գործառույթները:
- Բանկի կողմից 2019թ.-ի ընթացքում իրականացվել է նաև ընդհանուր շուրջ 6 մլն. ԱՄՆ դոլար ծավալով Բանկի սեփական պարտատոմսերի թողարկման գործընթացի սպասարկումը:
- Կատարելագործվել է ԱՐԱՐԱՏ-ԴԻԼԻՆԳ ծրագրային համակարգի աշխատանքը՝ վերջինիս սպասարկումն իրականացնող կազմակերպության հետ օպերատիվ աշխատանքների միջոցով:
- 2019թ.-ին իրականացվել է նաև Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայությունների միջնորդավորման ընթացակարգի փոփոխություն՝ համապատասխանեցնելով այն դեպոզիտարիայի կանոններին և Բանկի ներքին բիզնես գործընթացներին: 2019թ.-ի դեկտեմբերի վերջի դրությամբ Բանկի կողմից վարվել է 145 թողարկողների արժեթղթերի ռեեստրներ, ինչպես նաև ավելի քան 1,900 արժեթղթերի հաշիվներ:



## ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առցանց և թվային ֆինանսական ծառայությունների մատուցման շարունակաբար զարգացող շուկան բավականին մրցակցային է և օրեցօր ի հայտ են գալիս նոր մասնակիցներ, իսկ արդեն գործողները մշտապես փորձում են պահպանել ու ընդլայնել իրենց դիրքերը: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ Բանկը 2019թ.-ին առանձնացավ մատուցվող թվային բանկային ծառայությունների զարգացման և կատարելագործման նոր միջոցառումներով՝ ուշադրության կենտրոնում պահելով մասնավորապես մոբայլ բանկինգի կատարելագործումը: Այսպես, Բանկը 2019թ.-ին իրականացրեց «ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱՅԼ» բջջային հավելվածի վերաձևափոխում՝ ինչպես արտաքին տեսքի, այնպես էլ մատուցվող ծառայությունների մասով:

- նոր վարկային և ավանդային պրոդուկտների ներդրում հավելվածում («Արագ վարկ», «Ժամկետային ավանդ», «Կուտակային ավանդ»),
- հաճախորդի կողմից այլ բանկերի քարտերը կցելու մոդուլի ներդրում, այլ բանկերի քարտերով վճարումների իրականացում և ընթացիկ հաշիվների համալրման հնարավորություն,
- քարտից քարտ փոխանցման իրականացում 3D secure համակարգի կիրառմամբ և ծառայության հասանելիության ապահովում բոլոր վճարային համակարգերում՝ բոլոր արժույթներով,
- գույքահարկի վճարման հնարավորություն և ավտոմեքենայի տեխ. զննման կտրոնի ստացման հնարավորություն, պետ. բյուջե փոխանցումների հնարավորություն,
- բջջային հավելվածի ռեդիզայնի իրականացում և եռալեզու տարբերակի գործարկում,



- ↗ իմ մեքենաները բաժնի ավելացում և ավտոմեքենայի նույնականացման տվյալների մուտքագրմամբ խախտումների վերահսկման հնարավորություն,
- ↗ հաճախորդի կողմից ԱՊՊԱ պայմանագրերի առցանց կնքման մոդուլի ամբողջական գործընթացի իրականացում և ներդրում, ինչպես նաև «Իմ մեքենաներ» բաժնի ավելացում ու գույքահարկի վճարման հնարավորություն,
- ↗ լիովին նոր հերթերի կառավարման համակարգի ներդրում և գրանցման գործընթացի կազմակերպում՝ առանց անձի կրկնակի բանկ այցելելու,
- ↗ «Խմբեր», «Ձևանմուշներ» և «Ընտրվածներ» բաժիններ ստեղծելու և նոր «Պատմություն» բաժնի ու զանգի պատվերի հնարավորություն,
- ↗ ընթացիկ հաշիվների ավտոմատ փակում,
- ↗ արտասահմանյան քարտից փոխանցման հնարավորություն,
- ↗ առանց բանկ այցելելու 3D secure համակարգը ակտիվացված քարտերով առցանց գրանցվելու հնարավորություն,
- ↗ անվտանգության առաջատար համակարգերի ներդրում “IOS” ու “Android” հավելվածների համար:



## ՄԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

Հաճախորդների գոհունակությունն ու բարձր գնահատականը գտնվում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի մշտական ուշադրության կենտրոնում: Բարձր մակարդակի վրա պահելով հաճախորդ-բանկ հարաբերությունները ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը հանդես է գալիս հաճախորդակենտրոն և հաճախորդամետ քաղաքականությամբ՝ մշտապես վերանայելով սպասարկման որակը, առաջարկվող պրոդուկտներն ու նորարարական ծառայությունները: Յուրաքանչյուր նորարարության և որոշումների կայացման հիմքում դնելով հաճախորդների շրջանում իրականացվող հարցումներն ու մշտադիտարկումները՝ առանձին սեգմենտների ուսումնասիրությունների իրականացմամբ վեր են հանվում նրանց կարիքները և պահանջմունքները՝ առաջարկելով առավել հարմար և մրցակցային ծառայություններ ու պրոդուկտներ:


Բանկը 2019թ.-ին վերանայեց իր մասնաճյուղային ցանցի արդյունավետությունը և արդիականացումը: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով թվայնացման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միտումները 2019թ.-ին վերանայվեցին և արդիականացվեցին հաճախորդներին մատուցվող թվային բանկային ծառայությունները:



Մասնավորապես՝ թարմացվեց և ընդլայնվեց ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱՅԼ բջջային հավելվածը՝ ընդլայնելով առաջարկվող ծառայությունների ցանկը, դառնալով առավել հասանելի, անվտանգ և արագ: Հաճախորդները այսուհետ հնարավորություն ունեն իրականացնել տարատեսակ օնլայն վարկերի ձեռքբերման և ավանդների տրամադրման գործարքներ, 3D Secure համակարգի կիրառմամբ իրականացնել անվտանգ գործարքներ բոլոր վճարային համակարգերով, օգտվել հերթերի կառավարման համակարգից առանց կրկնակի բանկ այցելելու, կցել ու իրականացնել վճարումներ նաև այլ բանկերի քարտերով և այլն:

Ունենալով տարիներով ապացուցված հավատարիմ հաճախորդների շրջանակ, ինչը փաստում է ֆինանսական համակարգում ունեցած կայուն և հուսալի դիրքերը, Բանկը, հանդես գալով որպես վստահելի գործընկեր, 2019թ.-ին ներդրեց նոր ԱՐԱՐԱՏԿՈՄՖՈՐՏ ավանդատեսակը՝ հնարավորություն տալով հաճախորդներին վստահել իրենց խնայողությունները առավել ճկուն և շահեկան պայմաններով: Սուր մրցակցային պայմաններում 2019թ.-ին Բանկը պահպանել է հաճախորդների իր կայուն շրջանակը:

### Հաճախորդների կազմն ու կառուցվածքը՝ առ 31.12.2019



1. **Աբովյան՝ ՀՀ**, Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Հանրապետության 1/21
2. **Ագարակ՝ ՀՀ**, Սյունիքի մարզ, Կարճևանի համայնք, ավան Ագարակ
3. **Աշտարակ՝ ՀՀ**, Արագածոտնի մարզ ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 18
4. **Աջափնյակ՝ ՀՀ**, ք. Երևան, Աջափնյակ, Բեկնազարյան փ. 5/15 և 5/8 շինություններ
5. **Ավան 1՝ ՀՀ**, ք. Երևան, Ավան Խուղյակով 222
6. **Ավան-Առինջ՝ ՀՀ**, ք. Երևան, Ավան-Առինջ թաղամաս, 2-րդ միկրոշրջան 7/8
7. **Արաբկիր՝ ՀՀ**, ք. Երևան, Արաբկիր, Կոմիտաս 56
8. **Արարատյան՝ ՀՀ**, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 10
9. **Արմավիր՝ ՀՀ**, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Հանրապետության 6
10. **Արշակունյաց՝ ՀՀ** ք. Երևան, Կենտրոն, Արշակունյաց պողոտա 15
11. **Արտաշատ՝ ՀՀ**, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց 95
12. **Բագրատաշեն 1՝ ՀՀ**, Տավուշի մարզ, գյուղ Բագրատաշեն, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Բագրատաշեն մաքսային կետ
13. **Բագրատաշեն 2՝ ՀՀ**, Տավուշի մարզ, գյուղ Բագրատաշեն, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի Բագրատաշեն մաքսային կետ
14. **Բաղրամյան՝ ՀՀ**, ք. Երևան, Բաղրամյան պողոտա 2 շենք, 88 տարածք
15. **Բավրա՝ ՀՀ**, Շիրակի մարզ, գ. Բավրա
16. **Բյուզանդ՝ ՀՀ**, ք. Երևան, Կենտրոն, Փ. Բյուզանդի 1
17. **Գյումրի՝ ՀՀ**, Շիրակի մարզ, ք.Գյումրի, Գարեգին Նժդեհի փողոց 10/12
18. **Գյումրի 1՝ ՀՀ**, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խորենացի 21
19. **Գյումրի 2՝ ՀՀ**, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շիրակացու 63



20. **Գյումրի 3՝** ՀՀ, Գարեգին Նժդեհ 3/3
21. **Գյումրի մաքսատուն՝** ՀՀ, Թբիլիսյան խճուղի 2/14
22. **Գոգավան՝** ՀՀ, Լոռու մարզ, գ. Գոգավան, Գոգավան-Պրիվոլնոյե մաքսակետի տարածք
23. **Գորիս՝** ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մաշտոցի 6/1
24. **Դավիթաշեն՝** ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն, 2-րդ թաղամաս 44 շենք
25. **Դիլիջան՝** ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Գետափի 6ա
26. **Երիտասարդական՝** ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Երևանի մետրոպոլիտենի Երիտասարդական կայարան
27. **Ջարգացում՝** ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Պարոնյան 21/1
28. **Ջեյթուն՝** ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Ջեյթուն, Պարույր Սևակ 51/1
29. **Էլիտ-պլազա՝** ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Մովսես Խորենացի 15
30. **Էջմիածին՝** ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Մեսրոպ Մաշտոց 6բ/1
31. **Էրեբունի՝** ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Խաղաղ Դոնի 13/1
32. **Իզմիրլյան՝** ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ամիրյան 27 թիվ 2 տարածք
33. **Իջևան ՀՀ՝** Տավուշի մարզ, ք. Իջևան, Երևանյան 5/3-2
34. **Խորենացի՝** ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Մովսես Խորենացի 24/7
35. **Ծաղկաձոր՝** ՀՀ, Կոտայքի մարզ, ք Ծաղկաձոր, Գր. Մագիստրոսի 2-րդ շենք
36. **Կենտրոն՝** ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Հյուսիսային պողոտա 10/5
37. **Կոմիտաս՝** ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Կոմիտաս 12/1
38. **Հրազդան՝** ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 78/3
39. **Մալաթիա՝** ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Րաֆֆու 39/1



40. **Մաշտոց՝** ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 25
41. **Մասիս՝** ՀՀ, Արարատի մարզ, ք Մասիս, Կենտրոնական հրապարակ 17
42. **Մարտունի՝** ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 42/2
43. **Նոր Արեշ՝** ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Գաջեգործների 76
44. **Նորագավիթ՝** ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 127/21
45. **Նոր Նորք՝** ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Գայի պողոտա 15/5
46. **Նոր Նորք 1՝** ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Հունան Ավետիսյան 46/5
47. **Նուբարաշեն՝** ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն թ. 11, 16/12
48. **Շենգավիթ՝** ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ, Գարեգին Նժդեհի 29/33
49. **Շիրակ՝** ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Արագածի 2/6
50. **Ուսանողական՝** ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ կենտրոնական մասնաշենք
51. **Չարենցավան՝** ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Խանջյան փողոց թիվ 1 առևտրի սրահում
52. **Ջրվեժ՝** ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Ա. Քոչինյան 4/2
53. **Սեբաստիա՝** ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սեբաստիա 141/1
54. **Սևան՝** ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 142/1
55. **Սիսիան՝** ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շաքիի համայնք, Երևան մայրուղու 7-րդ կիլոմետր
56. **Սպիտակ՝** ՀՀ, Լոռու մարզ, ք. Սպիտակ, Թորոսյան 13
57. **Ստեփանակերտ՝** ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Մ. Մաշտոցի 1/Ա
58. **Վանաձոր՝** ՀՀ, Լոռու մարզ, ք Վանաձոր, Տիգրան Մեծի 40
59. **Վանաձոր 1՝** ՀՀ, Լոռու մարզ, ք Վանաձոր, Մոսկովյան փ.թիվ 44
60. **Վանաձոր 2՝** ՀՀ, Լոռու մարզ, ք Վանաձոր, Գր. Լուսավորիչ 52





## **Ներքին աուդիտի գործառույթ**

Ներքին հսկողական համակարգը Բանկի զարգացման ռազմավարական նպատակների իրագործման և կառավարման հիմնական տարրերից է: Ներքին հսկողական համակարգն ուղղված է բարելավելու և զարգացնելու Բանկի գործունեության արդյունավետությունը, աջակցելու Բանկին հասնելու իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

Բանկում ներդրվել և շարունակաբար կատարելագործվում է միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, ինչպես նաև ռիսկերի գնահատման հիման վրա Բանկի ներքին աուդիտի աշխատանքների պլանավորման, ստուգումների իրականացման և հետստուգումային հսկողության (Follow up) գործառույթ:

Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին ու վարվելակերպի կանոններին համապատասխան Բանկում ներդրված Ներքին աուդիտի գործառույթն ապահովում է անկախ և անկողմնակալ հավաստման (assurance) գործունեության իրականացում՝ ուղղված Բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Այդ նպատակով Ներքին աուդիտի կողմից վերանայվել են մոտեցումները աշխատանքային ծրագրի կազմման գործընթացում՝ հիմնականում ստուգումների իրականացման շեշտը դնելով Բանկի ինչպես տարածքային, այնպես էլ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման և ռիսկերի բացահայտման վրա: Ստուգումների և գնահատումների արդյունքները նպաստել են նաև բացահայտված խնդիրների վերացման նպատակով ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված Բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:







## ***Ռիսկերի կառավարման գործառույթ***

2019 թվականին՝ ինչպես անցած տարիներին, Բանկը ավանդաբար առանձնանում էր բարձր իրացվելիությամբ, վարկային և արտարժույթային ռիսկերի ցածր մակարդակով ու միջոցների ներգրավման աղբյուրների դիվերսիֆիկացման բարձր մակարդակով: Բանկում վարկային ռիսկը կառավարվում է ինչպես վարկային պորտֆելի մակարդակով, այնպես էլ առանձին վարկատեսակների և առանձին վարկառուների մակարդակներով:

Բանկում գործում է Վարկային ռիսկերի կառավարման հանձնաժողով, որն ամսական կտրվածքով և ըստ անհրաժեշտության քննարկում է Բանկի վարկային պորտֆելի վերլուծությունները և որոշումներ է կայացնում Վարկային ռիսկերի կառավարմանը վերաբերող հարցերի շուրջ: 2019թ. ընթացքում տեղի է ունեցել Վարկային ռիսկերի կառավարման հանձնաժողովի թվով 12 նիստեր, որոնց ժամանակ կայացվել են որոշումներ և տրվել են հանձնարարականներ՝ վարկային ռիսկերի կառավարման և նվազեցման նպատակով:



Բանկի ղեկավարության կողմից պարբերաբար քննարկվում են Բանկի ռիսկի ախորժակի վերանայման անհրաժեշտությունը և հնարավորությունները՝ Բանկի կայուն զարգացումն, վարկային պորտֆելի և եկամտաբերության աճ ապահովելու նպատակով:

Բանկը անընդհատ դիտարկում է արագ վարկավորման և հեռավար եղանակով վարկավորման հնարավորությունները և բնորոշ ռիսկերը՝ նպատակ ունենալով հնարավորինս հարմարավետ կազմակերպել հաճախորդների սպասարկումը՝ պահպանելով Բանկի վարկավորման զգուշավոր մոտեցումները և սահմանափակել վարկային ռիսկերի էական աճը:

Բանկը շարունակաբար բարելավում է վարկային պորտֆելի վերլուծությունները և սթրես թեստերը: Իրացվելիության ռիսկերի կառավարման նպատակով Բանկում գործում են սահմանաչափերի պահպանման և ամենօրյա կտրվածքով հսկողության իրականացման մեխանիզմներ: Բանկում իրականացվում են ընթացիկ, կարճաժամկետ և երկարաժամկետ իրացվելիության ռիսկի կառավարում, իրացվելիության ճեղքվածքի և բացասական ազդեցության սցենարային վերլուծություններ:



Իրացվելիության ռիսկի կարճաժամկետ կառավարման գործառույթներն իրականացնում է Բանկի Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը, որը կանխատեսված դրամական հոսքերի ճեղքվածքի դեպքում համապատասխան միջոցներ է ձեռնարկում լրացուցիչ միջոցներ ներգրավելու կամ ավելցուկային իրացվելիությունը տեղաբաշխելու ուղղությամբ:

2019թ.-ի ընթացքում տեղի է ունեցել Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովի 12 նիստ, որոնց ժամանակ հաստատվել են նաև վարկավորման բազային տոկոսադրույքներ՝ ըստ արժույթների:

Բանկում ներդրված է նաև իրացվելիության ճգնաժամային կառավարման մեխանիզմ, որը օգտագործվում է իրացվելիությանը սպառնացող անկանխատեսելի իրավիճակներում, մասնավորապես՝ սահմանված ցուցանիշների և արտաքին գործոնների բացասական ազդակների դեպքերում:

Տոկոսադրույքի ռիսկը, մշտապես գտնվում է Բանկի ուշադրության կենտրոնում՝ հաշվի առնելով, որ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունները կարող են ազդել Բանկի ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա: Բանկում տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակով իրականացվում են նաև բազիսային, եկամտաբերության կորի փոփոխության և ժամկետային անհամապատասխանության ռիսկերի գծով վերլուծություններ:



Հաշվի առնելով ՀՀ-ում տնտեսական, քաղաքական զարգացումները և բանկային համակարգի ներկա վիճակը, Բանկի զգուշավոր քաղաքականությունը և Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները՝ Բանկում արտարժույթային ռիսկի ի հայտ գալու հավանականությունը հասցվում է նվազագույնի: Արտարժույթային ռիսկի գնահատման համար Բանկն օգտագործում է ՎԱՌ մեթոդաբանությունը (որոշակի հավանականությամբ՝ արտարժույթի փոխարժեքի տատանման հետևանքով Բանկի կրելիք վնասը), ինչն իրականացվում է ամսական կտրվածքով:

Հաշվի առնելով գործառնական ռիսկի նշանակությունն ու կարևորությունը՝ Բանկը այն միշտ պահում է իր ուշադրության կենտրոնում: Բանկում գործում է Գործառնական ռիսկերի կառավարման հանձնաժողով և ռիսկային պատահարների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համակարգ: Գործառնական ռիսկերի գնահատումն իրականացվում է առկա և պոտենցիալ վնասի հաշվարկման, ինչպես նաև ռիսկերի քարտեզի միջոցով: Բանկում կարևորելով գործառնական ռիսկի զսպման և արդյունավետ կառավարման հանգամանքները՝ մշտապես քննարկվում են գործառնական ռիսկի կառավարման կատարելագործման նոր մոտեցումների ներդրման հարցեր, ուսումնասիրվում են միջազգային կազմակերպությունների լավագույն փորձն ու մոտեցումները:

Գործառնական ռիսկերի նվազեցման նպատակով Բանկում պարբերաբար իրականացվում են բիզնես գործընթացների ուսումնասիրություններ և ներկայացվում են ռիսկերի նվազեցմանը ուղղված առաջարկություններ:





## **Համապատասխանության ապահովման գործառույթ**

Ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև Համապատասխանության ապահովման գործընթացի իրականացման նպատակով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ նոր կառուցվածքով, սահմանվել է Համապատասխանության ապահովման խումբ, որն օժանդակում է գործարար գործընթացների իրականացումն օրենսդրության, նորմատիվ և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև նպաստում է համապատասխանության և կորպորատիվ մշակույթի պահպանմանը:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում արդյունավետ համագործակցում են հսկողական գործառույթի՝ Ներքին աուդիտի, Ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման համակարգերը՝ համաձայն ՀՀ ԿԲ իրավական ակտերի պահանջների, որոնք ուղղված են բարձրացնելու ընթացիկ գործունեության նկատմամբ հսկողությունը, գնահատելու և նվազեցնելու հնարավոր ռիսկերը:

Ներքին իրավական ակտերը ուսումնասիրվում են ըստ առանձին գործառնությունների՝ ՀՀ օրենքների և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության տեսանկյունից, ինչպես նաև տրվում են օպտիմալացման առաջարկություններ:

